ԳԵՐԵԶՄԱՆՈՑԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՅՈՒՇԱՐՁԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ (20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ – 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ

Յարութիւն Մարութեան

Յայտնի իրողութիւն է, որ մարդու մահը չի աւարտւում գերեզմանոցում թաղման ծէսով: Սրան յաջորդում են շատ ու շատ այլ արարողութիւններ ինչպէս գերեզմանոցում, այնպէս էլ այլ վայրերում ու, մասնաւորապէս, մահացածներին նուիրուած յուշարձաններում: Դրանք ընդունուած է անուանել «յիշատակի ծէսեր», որոնք ինչ-որ ժամանակ մաս են կազմում կոլեկտիւ յիշողութեան, ապա տեղափոխւում պատմական յիշողութեան ոլորտ եւ տարբեր դրսեւորումներով կարող են տեւել դարեր շարունակ: Ներկայ յօդուածի մէջ փորձ է արուելու դիտարկել այս ծաւալուն խնդրի միայն մեկ տեսանկիւն. գերեզմանոցային մշակոյթի դրսեւորումները 20-21-րդ դարերի հայոց յուշարձանային մի քանի, սակայն կարեւոր համալիրներում:

Զոհուածներին նուիրուած յուշարձանները բազմապիսի ու բազմազան են՝ թէ լուծումներով, թէ մատուցուող մեկնաբանութիւններով: Որոշ դէպքերում, եթէ դրանք նուիրուած են, օրինակ, Անյայտ զինուորի յիշատակին, յուշարձանն իր մէջ ներառում է այդ զինուորի աճիւնը: Այդպիսիների շարքում կարելի է նշել ԽՍՀՄ-ում 1960-ական թուականներին սկսուած Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակի առթիւ յուշային (մեմորիալ) բնոյթի յուշարձանային համալիրները, ինչպէս օրինակ Ստալինգրադեան ճակատամարտի հերոսներին նուիրուած յուշահամալիրը Վոլգոգրադում (1959-67), Անյայտ զինուորի յուշարձանը Մոսկուայի Կարմիր հրապարակում (1966-67) եւ այլուր: Հայոց ցեղասպանութեան զոհերի յուշարձանային համալիրը (1965-67), նաեւ Սարդարապատի ճակատամարտի յուշահամալիրը (1968, ամբողջացումը՝ 1978) այսպէս թէ այնպէս, տեղաւորւում են յուշային բնոյթի՝ հէնց այդ տարիներին սկսուած կառուցումների շարքում: Այս, նաեւ բազմաթիւ այլ նման յուշահամալիրները մեկանգամեայ կառոյցներ չեն. երկրի կեանքում տեղ գտնող փոփոխութիւնները, որպէս կանոն, այս կամ այն կերպ արտացոլւում են նաեւ յուշարձաններում եւ յուշահամալիրներում, որոնք պարբերաբար թարմացւում են, դրանց կազմում աւելացւում են նոր տարրեր, առաջարկւում են նոր մեկնաբանութիւններ: Վերջին տարիներին մեր տրամադրութեան տակ յայտնուած նոր նիւթերով, նաեւ հին նիւթերի առաջին անգամ շրջանառութեան մէջ դնելու միջոցով ստորեւ կը փորձենք շարունակել նախկինում առաջ քաշուած թեզը[1] նուիրուած հայոց մէջ յուշարձանի՝ որպէս գերեզմանոց ընկալման խնդրին:

---

1 Մանրամասն տե՛ս **Յարութիւն Մարութեան**, *Յուշարձանը որպէս գերեզմանոց (Ցեղասպանութեան յուշահամալիրի օրինակով)*,- Հայ ժողովրդական մշակոյթ, XIII. Նիւթեր հանրապետական գիտական նստաշրջանի, խմբ. Դ. Վարդումեան, Ս. Յարութիւնեան, Ս. Հոբոսեան, Եր., «Գիտութիւն» հրատ., 2006, էջ 172-180: Նոյնի, *Памятник жертвам геноцида в контексте ритуалов памяти армянского народа*,- Этнографическое обозрение, Москва, 2008, N 3, էջ 119-128: Նոյնի, Հայ ինքնութեան պատկերագրութիւնը: Հատոր 1. Ցեղասպանութեան յիշողութիւնը եւ Ղարաբաղեան շարժումը, Եր., «Գիտութիւն» հրատ., 2009, էջ 72-78: Նոյնի, *Եղեռնի զոհերի յուշարձանը՝ հայ ժողովրդի յուշային ծի-*

Ցեղասպանութեան յուշահամալիրի տարածքում 1968 թ. սկսած շուրջ երկու տասնամեակ շարունակ կատարուող յիշատակի ծէսերի ամբողջութիւնը այն գործօններից էր, որը մարդկանց մէջ ձեւաւորել էր այդ յուշահամալիրի՝ որպէս գերեզմանոց ընկալումը: Հարցի նման մեկնաբանմանը նպաստող կարեւոր հանգամանք էր նաեւ այն, որ 1988 թ. փետրուարի 27-29-ին Սումգայիթում (ապա եւ 1990 թ. յունուարի 14-20-ին Բաքուում[2]) իրականացուող հայերի զանգուածային կոտորածներն անմիջապէս համադրուեցին Հայոց ցեղասպանութեան հետ, ընկալուեցին որպէս ցեղասպանութեան դրսեւորում, ինչի[3] հետեւանքով Ղարաբաղեան շարժման մէջ վերարժեւորուեց ցեղասպանութեան յիշողութիւնը, այն դարձաւ Շարժումն առաջ մղող հիմնական գործօններից մեկը: Այս ընկալումն իր ուղղակի դրսեւորումը գտաւ 1990 թ. յունուարի Բաքուի իրադարձութիւններին զուգահեռ հայ-ադրբեջանական սահմանային կռիւների ժամանակ (Երասխաւանի հատուած, յունուարի 18-21) զոհուած Մովսէս Գորգիսեանին (ԱԻՄ վարչութեան անդամ) եւ Երուանդ Սաղումեանին (ինքնապաշտպանական առաջին մարտերի մասնակից) Ցեղասպանութեան յուշահամալիրի տարածքում յուղարկաւորելու փաստով: Դրանից ընդամենը մեկ շաբաթ յետոյ, յունուարի 28-ին, ինչպէս նշւում է պաշտօնական հաղորդագրութեան մէջ, Երեւանում «զինուորական ստորաբաժանումը, առանց պետական իշխանութեան հանրապետական մարմինների համաձայնութեան, անց է կացրել ռազմական տեխնիկայի առգրաւման գործողութիւն, որի ընթացքում զէնք է գործադրուել եւ զոհուել է «Աստրո» արտադրական միաւորման բանուոր Է. Մարկոսեանը»:[4]

Էդուարդ Մարկոսեանը նոյնպէս յուղարկաւորուում է յուշահամալիրի տարածքում: Այստեղ աւելի քան մեկ տարի անց հողին յանձնուած միւս ազատամարտիկը ՄՈՒՇ-ի (ինքնուրոյն գործող 19 ջոկատների միաւորում՝ Միաւորուած ուժերի շտաբի) ընդհանուր հրամանատար, բազմաթիւ ինքնապաշտպանական մարտերի մասնակից, 1991 թ. մայիսի 4-ին Մովսէս գիւղի մատոյցներում զոհուած Մուշեղ Մխոյեանն (Վոժդ) էր: Եւս աւելի քան մեկ տարի անց այստեղ յուղարկաւորուեց հինգերորդ ազատամարտիկը՝ 1989-1990 թթ. «Սասունցի Դաւիթ» կամաւորական ջոկատի շտաբի պետ, ապա «Սասնայ ծռեր» ջոկատի հրամանատար Սամուել Գեւորգեանը: Նա կրակն իր վրայ վերցնելու եւ իր կեանքի գնով փրկել էր շրջապատման մէջ ընկած «Նաիրի» ջոկատի տղաներին

սակարգի համատեքստում,- Ճարտարապետութիւն, շինարարութիւն, Երեւան, 2009, թիւ 4 (ապրիլ), էջ 8-12: Նոյնի, *Հայոց ցեղասպանութեան եւ հրեաների Հոլոքոստի յիշողութեան կառուցուածքային առանձնայատկութիւնները*, Պատմա-բանասիրական հանդէս, 2011, թիւ 2, էջ 42-44:

2 1990 թ. փետրուարի 13-ին Հայկական ԽՍՀ 11-րդ գումարման Գերագոյն խորհուրդի 11-րդ նստաշրջանում ընդունուեց որոշում «1990 թ. Յունուարին Բաքու քաղաքում եւ Ադրբեջանական ԽՍՀ մի շարք այլ բնակավայրերում կատարուած սպանութիւնների, ջարդերի եւ այլ ոճրագործութիւնների ու դրա հետեւանքով ռեգիոնում իրավիճակի առաւել սրման մասին», որի առաջին կէտում նշուած է. «Դատապարտել հայերի ջարդերը Բաքուում եւ Ադրբեջանական ԽՍՀ միւս շրջաններում եւ դրանք գնահատել որպէս հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանութեան շարունակութիւն», իսկ երկրորդ կէտում պահանջ էր ներկայացուում ԽՍՀՄ Գերագոյն խորհրդին «ճանաչել եւ դատապարտել 1990 թ. յունուարին Բաքուում եւ Ադրբեջանական ԽՍՀ մի շարք այլ բնակավայրերում հայերի ցեղասպանութիւնը» (տե՛ս «Երեկոյեան Երեւան», Երեւան, 16 փետրուարի 1990 թ.):

3 Հարցի հանգամանալի վերլուծութիւնը տե՛ս **Յ. Մարութեան,** *Հայ ինքնութեան պատկերագրութիւնը:* Հատոր 1. Ցեղասպանութեան յիշողութիւնը եւ Ղարաբաղեան շարժումը, Եր., 2009:

4 Տե՛ս «ՀԽՍՀ Գերագոյն խորհրդի նախագահութիւնում», *Երեկոյեան Երեւան*, Եր., 1 փետրուարի 1990 թ.:

(1992 թ. յուլիսի 3): Նկատենք, որ արդէն այդ ժամանակ՝ 1992 թ. մայիսի 26-ին, հաստատուել էր «Եռաբլուր» պանթէոնի գերեզմանատուն լինելու կարգավիճակը, ու թերեւս այս հանգամանքը նպաստեց նրան, որ Ցեղասպանութեան յուշահամալիրի տարածքում այլեւս թաղումներ չիրականացուեցին:

Այսպիսով, Ցեղասպանութեան յուշահամալիրի՝ որպէս գերեզմանոց, ժողովրդի մէջ առկայ պատկերացումներից զատ, եթէ առաջին երկու յուղարկաւորութիւններն ինչ-որ կերպ կարելի է կապել Բաքւում հայութեան՝ ցեղասպանութիւն ընկալուող զանգուածային կոտորածների հետ ժամանակային իմաստով համընկնելուն, ապա երրորդ թաղումը, ինչպէս մեզ է թւում, նախորդների «տաք-տաք» հետքերով շարունակութիւնն էր եւ վերջին երկուսի նման, թերեւս, կապւում էր ժամանակաշրջանի իրողութիւնների հետ, որի բնութագրական գծերից էր տասնեակ կամաւորական ջոկատների[5] ազդեցութեան համեմատաբար բարձր մակարդակը, ինչը պայմանաւորուած էր այն փաստով, որ նրա՛նք էին ապահովում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգութիւնը: Զմոռանանք, որ Հայկական բանակի կազմաւորման օր է համարւում 1992 թ. յունուարի 28-ը, երբ ընդունվեց որոշում «Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան մասին»:[6]

Սարդարապատի ճակատամարտի յուշահամալիրի տարածքում առաջին արծուի անմիջական հարեւանութեամբ, իշխանութիւնների գիտութեամբ, 1970-ական թուականների երկրորդ կէսին հողին էր յանձնուել Սարդարապատի ճակատամարտի ակտիւ մասնակից, ամերիկահայ, ծնունդով վանեցի Վաղարշակ Շահինեանի (1889-1976) աճիւնասափորը: Շիրիմը խիստ համեստ էր, բնաւ աչքի չընկնող. երեւի թէ 40x40 սմ չափերի տապանաքար էր եւ, կարելի է ասել, գերեզմանի առկայութեան փաստին տեղեակ էին միայն հանգուցեալի բարեկամները: 1990-ական թթ. առաջին կէսին յուշահամալիրին մօտակայ գիւղերից արցախեան 1992-94 թթ. ազատամարտի ութ զոհեր յուղարկաւորուեցին Զանգակատան հատուածից ոչ հեռու, տարածականօրէն (բայց ոչ վիզուալ) անջատուած, սակայն այժմ արդէն յուշահամալիրի բաղկացուցիչ մաս դարձած մի հատուածում: Այս իւրատեսակ պանթէոնի մուտքի մասը ձեւաւորուած է վահանով եւ սրով՝ «Փառք հերոսներին վասն քաջաց» արձանագրութեամբ, իսկ յետնամասում իշխող դիրք է գրաւում իսրայէլեանական արծուի նմանողութեամբ եւ երկու խաչքարային յօրինուածքով յուշաքարը, որին փորագրուած է պանթէոնի ստեղծման տարեթիւը (ՌՋՂԶ-=1996) եւ «Արցախեան գոյամարտի նահատակներին» գրութիւնը: 2011 թ. Հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի ազգային թանգարանի ղեկավարութեան եւ ՀՀ պաշտպանութեան նախարարութեան նախաձեռնութեամբ ու մի շարք բարերարների օժանդակութեամբ, Վաղարշակ Շահինեանի շիրիմը նոր տեսք է ստանում, վերածուելով իւրատեսակ յուշարձանի. դրւում է նոր

5 Հարցի շուրջ տե՛ս, օրինակ **Հ. Բ. Աբրահամեան**, *Կամաւորական ջոկատներից մինչեւ Պաշտպանութեան բանակի ստեղծումը*,- Լրաբեր հասարակական գիտութիւնների, Երեւան, 2006, թիւ 3, էջ 117-118: **Ռուզաննա Մովսէսեան**, *Երկրապահ կամաւորական ջոկատներն Արցախի պաշտպանութեան համար մղուած մարտերում*,- Պատմութիւն եւ մշակոյթ հայագիտական հանդէս, Երեւան, 2013, էջ 153-154:

6 «Հայոց ազգային բանակի ստեղծման իրաւական հիմքը. 1992 թ. յունուարի 28-ի կառավարութեան որոշումը»՝ http://www.aniarc.am/2020/01/28/1992-january-28-armenian-army/: Այստեղ նշուած է, որ Հայոց բանակի կազմաւորման առաջին փուլն աւարտւում է 1992 թ. մայիսին, երբ Պաշտպանութեան նախարարութիւնը սկսեց առաջին զօրակոչը հանրապետութեան տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն աւանդոյթին:

շիրմաքար՝ յաղթական թուր եւ վահան՝ արծուի պատկերով, ապա եւ խաչքար յիշեցնող թուր՝ հիմքում «Երախտապարտ Հայ ժողովրդից» մակագրութեամբ (քանդակագործ՝ Վարազդատ Համբարձումեան): Յուշարձանի երկրորդ կեանքն ուղեկցւում է տարաբնոյթ այցելութիւններով. այն փաստօրէն իր վրայ է վերցրել Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների հաւաքական գերեզմանը խորհրդանշող գործառոյթ, որին յարգանքի տուրք են մատուցում նաեւ բարձրաստիճան պաշտօնական հիւրերը: Եթէ նախկինում Սարդարապատի յուշահամալիր դէպքից դէպք էին այցելում պետական այրերը, ապա շուրջ մեկ տասնամեակ ամեն տարուայ մայիսի 28-ին այստեղ նշւում է Սարդարապատի հերոսամարտի եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան հռչակման տարեդարձը երկրի բարձրագոյն աշխարհիկ եւ հոգեւոր ղեկավարութեան մասնակցութեամբ. Զանգակատան աստիճաններին եւ Արցախեան պատերազմի զոհերի պանթէոնում դրւում են ծաղկեպսակներ, կատարւում է հոգեհանգստի կարգ, ապա եւ զինուորական շքերթ:

Այսպիսով, այս երկու յուշահամալիրների օրինակով ակնառու է դառնում, թէ ինչպէս են կենոտաֆ հանդիսացող յուշահամալիրները ժամանակի ընթացքում, երկրի կեանքում տեղ գտած արմատական փոփոխութիւնների հետեւանքով՝ սահմանային բախումներ, պատերազմ, անկախութեան կերտում, գաղափարախօսութեան ձեւափոխում եւ այլն, վերածւում իրական թաղումներ պարունակող կառոյցների, ինչի շնորհիւ Ցեղասպանութեան յուշահամալիրի գերեզմանոցային գործառոյթներն աւելի ակնառու են դառնում, իսկ Սարդարապատի պարագայում դրան աւելանում է ռազմի դաշտում տարած յաղթանակի պետական բարձր մակարդակով նշումը: Երկու տեղում էլ մարդկանց պատկերացումներում առկայ հին զոհերին աւելանում են նոր զոհերը, այդ կերպ ամրացնելով սերունդների միջեւ կապը, վերահմաստաւորելով արդէն իսկ սրբազան տարածքի գործառոյթներ ունեցող յուշահամալիրները: Եւ եթէ Սարդարապատի պարագայում հերոսականութեան գործօնն արդէն իսկ առկայ է եւ նոր թաղումներն այն ամրացնելու համար լոկ լրացուցիչ կռուան են, ապա Ցեղասպանութեան յուշահամալիրի պարագայում նոր թաղումների շնորհիւ հերոսականութեան կամ կռուի ու պայքարի գաղափարը դեռեւս լիարժէքօրէն չի գիտակցուել: Դրա պատճառների թւում նշեմ երկու հանգամանք, երկուսն էլ քարոզչութեան ոլորտից. Հայոց ցեղասպանութիւնը շարունակւում է հանրութեանը մատուցուել որպէս լոկ կորստի իրողութիւն, բաւարար շեշտադրումներ չեն արւում ցեղասպանութեան տարիներին տեղ գտած ինքնապաշտպանական մարտերին, բազմաթիւ դիմադրական օջախների լուսաբանմանը որպէս պայքարի դրսեւորումներ եւ երկրորդ, Արցախեան ազատամարտի զոհերի թաղումները չեն մեկնաբանւում Ղարաբաղեան շարժման, ցեղասպանութեան յիշողութեան եւ «յուշարձանը որպէս գերեզմանոց» մօտեցման լոյսի ներքոյ:

Ստեփանակերտի «Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախեան ազատամարտի զոհերի յիշատակը յաւերժացնող յուշահամալիրը» (այն ժողովրդի մէջ աւելի յայտնի է «Братская могила» (թրգմ. «Եղբայրական գերեզման») կամ «Եղբայրական հանդիստ» անուամբ) իր մէջ բազմաթիւ շերտեր ունի: Նրա ձեւաւորումը սկսուել է Հայրենական մեծ պատերազմի ժամանակ վիրաւորուած եւ մերձակայ զինուորական հիւանդանոցում մահացած զինուորականների (քրիստոնեայ) գերեզմանոցից (յուղարկաւորուած է շուրջ չորս տասնեակ հոգի) եւ դրա առջեւում 1975 թ. կառուցուած յուշարձանից (ճարտ.՝ Եուրա Յակոբեան). վերջինիս արտաքին տեսքը որոշ նմանութիւն ունի Սարդարապատի յուշահամալիրի

մուտքի հատուածի հետ:Համալիրի մաս է կազմել Լեռնային Ղարաբաղից սերող ԽՍՀՄ ճանաչուած զօրավարների եւ «Հերոսների ծառուղին» («Аллея героев»)՝ մի քանի գործիչին նուիրուած մեկ քառակող (տեղական սպիտակ քարից պատրաստուած) յուշասիւնով (ընդամէնը՝ 12 հատ). սրա սկզբնամասում դրուած յուշաքարին փորագրուած է «Военачальники и Герои Советского Союза выходцы из Нагорного Карабаха» («Ծագումով Լեռնային Ղարաբաղից զօրահրամանատարներ եւ Խորհրդային Միութեան հերոսներ»): Յուշահամալիրի կառուցումը 1970-ականների սկզբին համարուել է համաժողովրդական կառոյց, որին ամեն շաբաթ կամաւորապարտադիր սկզբունքով մասնակցում էին մարզի ուսանողները, բարձր դասարանների աշակերտները: Ապա սրան գումարուել է համալիրի ներկայ մուտքից աջ հայաստանեան կարմիր տուֆից կառուցուած յուշապատը (կրկին նուիրուած արցախահայութեան մասնակցութեանը Հայրենական մեծ պատերազմին)՝ թերեւս տարբեր տարիքի զինուորականներ խորհրդանշող կերպարների դիմաքանդակներով, Խորհրդային Միութեան հերոսի ոսկէ աստղով, կից պատին՝ չորս ցայտաղբիւրներով, որոնց վերնամասում բուսական մոտիվներով զարդաքանդակներ են: Յուշապատի անմիջական մերձակայքում տեղադրուած էր խաչքար «Ճակատագիրդ անյայտ անունդ անմահ» արձանագրութեամբ՝ նուիրուած Արցախեան ազատամարտում անյայտ կորածների յիշատակին: Խաչքարի նման տեղադրութեամբ անմիջական տարածական (եւ գաղափարական) կապ էր ստեղծուած երկու հայրենական պատերազմների զոհերի միջեւ: 2012 թ. յետոյ այդ խաչքարը տեղափոխուեց յուշահամալիրի միւս ծայրում գտնուող արցախեան պատերազմի զոհերի գերեզմանոցի մուտքի մօտ: Ընդ որում, այս յուշապատի անմիջական հարեւանութեամբ, սակայն համալիրի տարածական սահմանից դուրս, երկար տարիներ գործել է Քաղաքացիական կացութեան ակտերի գրասենեակը (ՔԱԳՍ), որտեղ ամուսնացող զոյգերը, որպէս կանոն, նախ եւ առաջ այցելել են յուշահամալիր եւ ծաղիկներ դրել զոհուածների յուշարձաններին:

Ցեղասպանութեան դարադարձին ընդառաջ նշուած յուշապատի մուտքի հատուածում արծաթագոյն տառերով ամրացուեցին Պարոյր Սեւակի «Եռաձայն պատարագ» պօէմի յայտնի կրկնատողերը՝ «Ողբամ մեռելոց... Բեկանեմ շանթեր... Կոչեմ ապրողաց...»: Յուշապատի վերջնամասից այն կողմ 2015 թ. տեղական սպիտակ մարմարից կառուցուեց «Զանգակատուն» յուշարձանը, որի մտայղացումը ճարտարապետի մօտ առաջացել էր Պ. Սեւակի «Անլռելի զանգակատուն» պօէմի ընթերցումից: Այն երկաստիճան գմբեթով զանգակատուն է, ունի 18մ բարձրութիւն եւ պսակուած է 9մ բարձրութեան խաչով: Զանգակատան հիմքում Արցախի թեմական առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանը Ցեղասպանութեան նահատակների մասունքների զետեղման կարգ է կատարել: Մասունքները բերուել են Դեր Զօրից: Զանգակատան հետեւում նոյն սպիտակ մարմարի անմշակ ապառաժ է դրուած՝ հետեւեալ արձանագրութեամբ. «Կառուցաւ հուշարձանս [sic!] Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին յամի տեառն ՍԺԷ (2015) / Յիշատակն արդարոց եվ [sic!] նահատակաց օրհնութեամբ եղիցի»:[7] Սրա կողքին գտնուող սպիտակ մարմարի աւելի փոքր անմշակ բեկորին փորագրուած է. «1981-1994 թթ. Եւրախորհրդարանի պատգամաւոր հայ ժողովրդի մեծ բարեկամ Անրի Սաբի»:[8] Զանգակատան յետնամասում

7 Դասական ուղղագրութեան (որին ցանկացել են հետեւել արձանագրութեան հեղինակները) կանոններով պէտք է լինի «յուշարձանս» եւ «եւ»:

8 Անրի Սաբին (1933-2011) մեծ դերակատարութիւն է ունեցել Եւրախորհրդարանում արցախահայութեան իրաւունքները պաշտպանող տարբեր բա-

նաեւ հայկական տուֆից խաչքար է տեղադրուած՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին:

1988 թ. գարնանը համալիրի նոր մուտքի կողմի ձախ հատուածում տեղադրուել է ցայտաղբիւր-յուշարձան յիշեցնող կառոյց, նուիրուած Սումգայիթի զոհերի յիշատակին՝ «Жертвам сумгаитской трагедии февраль 28-29 1988 г.» («1988 թ. փետրուարի 28-29-ի սումգայիթեան ողբերգութեան զոհերին») մակագրութեամբ: Նոյն թուականի դեկտեմբերեան երկրաշարժից յետոյ կրկին մուտքի ձախ հատուածում դրուել է «1988 թ. հայոց մեծ երկրաշարժի զոհերի յիշատակին» արձանագրութեամբ ճաք տուած խոյակի բեկոր յիշեցնող յուշաքար, կողքը՝ երկու ձեռքով գլուխը բռնած, ասես «վայ» ասող ղարաբաղցի մամիկի շատ ազդեցիկ յուշարձանը: 1992 թ. ապրիլին ԼՂՀ Գերագոյն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչեանի աճիւնն ամփոփուեց մուտքի ձախ հատուածի սկզբամասում:

Կարելի է ասել, որ Ստեփանակերտի յուշահամալիրի նոր մուտքի ձախ հատուածում առկայ յուշարձաններն անդրադառնում են հայութեան նորագոյն շրջանի պատմութեան դրուագներին (սումգայիթեան ջարդեր, Սպիտակի երկրաշարժ, ԼՂՀ առաջին նախագահի շիրիմ), իսկ մուտքից աջ տեղակայուած յուշարձանները լուսաբանում են հայութեան ոչ հեռաւոր անցեալի՝ 20-րդ դարի առաջին կէսի իրադարձութիւնները (Հայոց ցեղասպանութիւն, Հայրենական մեծ պատերազմ):

Հայրենական մեծ պատերազմին նուիրուած յուշարձանի յետնամասում գտնուող գերեզմանոցում 1993 թ. յուղարկաւորուեցին Արցախեան ազատամարտի երկու զոհեր. նման որոշում կայացնելուց թերեւս առկայ էր այն բանի յստակ գիտակցումը, որ երկու պատերազմներն էլ եղել են «հայրենական»: Այդ նոյն ժամանակներում Հայրենական մեծ պատերազմի յուշարձանի մերձակայ հրապարակի անմիջական շարունակութեան վրայ ձեւաւորուեց արցախեան պատերազմի զոհերի գերեզմանոցը շուրջ հարիւր շիրիմներով: 2012 թ. յետոյ գերեզմանոցի սկզբնամասում կառուցուեց կամարակապ բացուածք եւ քարէ ցանկապատ: Վերջինիս մէջ ագուցուած են Մարտակերտի շրջանում ռազմական գործողութիւնների ժամանակ զոհուած շուրջ 200 մարդկանց անուն-ազգանուններով յուշաքարեր:

Կամարակապ բացուածքը սեւ տուֆից է եւ մի ծայրով մտնում է կարմիր տուֆից պատուանդանի մէջ: Բացուածքի վրայ ամրացուած են թերեւս արցախահայկական բնութագրական կերպարներ մարմնաւորող շուրջ մեկ տասնեակ դիմաքանդակներ: Բացուածքի անմիջապէս հետեւում թուր ու վահանով արծուաքանդակ յուշաքար է հետեւեալ մակագրութեամբ. «Պետրոլ սերվիս ՓԲԸ» հիմնադիր նուիրեալ հայրենասէր Էդուարդ Վերդիեանը Արցախի ազատութեանն իրենց կեանքը նուիրած արծուասիրտ հայորդիների սուրբ յիշատակին կանգնեցրել է 81 մահարձաններ... Փառք ու պատիւ բարերարին:

Ստեփանակերտի յուշահամալիրը, ի տարբերութիւն Ցեղասպանութեան եւ Սարդարապատի յուշահամալիրների, իր ձեւաւորման ժամանակներից մինչ մեր օրերը ունեցել է թաղումներ: Այն յուշահամալիր-գերեզմանոցի բնութագրական օրինակ է: Ու թերեւս այդ պատճառով այն իր բնոյթով բազմագործառութային է.

նաձեւերի ընդունման գործում: 1987 թ. Յունիսին նաեւ նրա ջանքերով էր, որ Եւրախորհրդարանը քննարկեց եւ ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւը: Պարգեւատրուել է «Մխիթար Գոշ» մեդալով: Իր կտակի համաձայն նրա մասունքների մի մասը հանգչում է Հայաստանում, միւս մասը՝ Արցախում:

https://www.youtube.com/watch?v=o-FY0C6YaTg

այստեղ կատարւում են պաշտօնական եւ ոչ պաշտօնական այցելութիւններ տարուայ մէջ առնուազն հինգ անգամ՝ Սումգայիթի զոհերի յիշատակի օրը, ԼՂՀ Գերագոյն խորհրդի առաջին նախագահի ծննդեան ու մահուան օրերին, Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օրը, Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակի օրը, Սպիտակի երկրաշարժի յիշատակի օրը: Այստեղ յուղարկաւորուած զոհուածների շիրիմներին պարբերաբար այցելում են նրանց հարազատներն ու բարեկամները. այդ կերպ պայքարի, կորուստների, յաղթանակների մասին յիշողութիւնը, սերունդների միջեւ կապը նախ եւ առաջ անհատականացւում է, նոր ապամաս է դառնում կոլեկտիւ ու պատմական յիշողութեան: Յուշահամալիրն ունի վառ արտայայտուած շրջանային եւ համահայկականութեան ընդամենը մեկ դրսեւորում, որի «անհրաժեշտութիւնը», կարելի է ասել, «գիտակցուեց» միայն Ցեղասպանութեան հարիւրամեակի շեմին: Ինչպէս եւ Ցեղասպանութեան ու Սարդարապատի յուշահամալիրներում է, այստեղ եւս կայ խորհրդանշական թաղում՝ ի դէմս Դեր-Զօրից բերուած նահատակների մասունքների: Գերեզմանոցային գործառոյթի եւս մեկ դրսեւորում է «զանգակատուն» կոչուող կառոյցի առկայութիւնը. յիշենք, որ Սարդարապատի պարագայում այն դրսեւորւում է հիմնական յուշասեան զանգերի միջոցով, իսկ Ցեղասպանութեան յուշահամալիրում, 2005 թ. ապրիլի 24-ին, յուշարձանի մերձակայքում Մայր Աթոռի կողմից տեղադրուեց մի յուշաքար, որտեղ արձանագրուած է, որ այդտեղ «համազգային ընծայաբերութեամբ կառուցուելու է մատուռ-սրբատեղի ի յիշատակ բիւրաւոր նահատակների»:

Երեք յուշահամալիրներն էլ, լինելով հանդերձ սրբազան տարածքներ, միաժամանակ նաեւ հասարակական կենտրոնի գործառոյթներ ունեն: Սարդարապատի պարագայում արդէն նշուեց, որ այնտեղ անց են կացւում տօնախմբութիւններ եւ զինուորական շքերթներ, Ցեղասպանութեան յուշահամալիրում սգոյ քայլերթերը դառնում են քաղաքական տրամադրութիւնների արտայայտիչ միջոցներ, նոյն նպատակով Ղարաբաղեան շարժման տարիներին օգտագործւում էր նաեւ Ստեփանակերտի Հայրենական մեծ պատերազմի յուշարձանի դիմացի հրապարակը: Վերջում նկատենք, որ ի տարբերութիւն միւս յուշահամալիրների, ստեփանակերտեանը չունի թանգարանային ու հետազօտական հատուած, նաեւ չի մատուցւում բաւարար տեղեկատուութիւն:

Թերեւս կարելի է մեծ համոզուածութեամբ պնդել, որ յուշային մշակոյթի հիմնական տարրերը նախ ձեւաւորուել են գիւղական-համայնքային մակարդակում՝ գերեզմանոցային մշակոյթի բազմաթիւ տարրերի ներառմամբ, ապա տեղ գտել համազգային նշանակութեան յուշահամալիրների կառուցուածքում: Գործընթացը եղել է փոխադարձ՝ համահայկական ճանաչում ունեցող յուշահամալիրների գաղափարախօսութեան եւ ձեւաւորման որոշակի տարրեր այնուհետեւ տեղ են գտել գիւղական-համայնքային մակարդակի յուշարձաններում:[9] Փորձենք երեւոյթը՝ մեզ հետաքրքրող թեմատիկայի շրջանակներում, դիտարկել Վայոց ձորում[10] 2015 թ. հաւաքուած դաշտային-ազգագրական նիւթերի մի մասի քննութեամբ:[11]

---

9 Երեւոյթի քննարկումը շատ աւելի լայն համատեքստում տե՛ս, օրինակ **С. А. Арутюнов**, *Этнографическая наука и изучение культурной динамики*, в кн.: Исследования по общей этнографии, отв. ред. Ю. В. Бромлей, М.: “Наука”, 1979, с. 24-60.

10 Խնդիրն իրականում բաւականին ընդարձակ է եւ մենք մտադիր ենք մօտ ժամանակներում մի առանձին հետազօտութիւն նուիրել Վայոց ձորի յուշային մշակոյթի ներկայ վիճակի քննութեանը:

11 Դաշտային աշխատանքներն իրականացուել են «Իմ Հայաստան» մշակութային ժառանգութեան

Չնայած 20-րդ դարասկզբից Արեւելեան Հայաստանում հիմնականում անցում կատարուեց գերդաստաններից փոքր ընտանիքների, սակայն գերդաստանային/-«ազգ»-ային մշակոյթի տարաբնոյթ տարրեր պահպանուեցին ու դեռ շարունակում են գոյատեւել: Այսպէս, յայտնի է, որ գիւղերում (յատկապէս պատմականօրէն ձեւաւորուած) ընտանիքները, որպէս կանոն, բնակւում էին ազգակցական հիմքով ստեղծուած թաղերում: Գերեզմանոցներում նոյնպէս թաղումները կատարւում էին ազգակցական հիմքով բաժանուած հատուածներում: Մինչդեռ Հայրենական մեծ պատերազմի զոհերը լաւագոյն դէպքում յուղարկաւորւում էին պատերազմի դաշտում կամ ռազմական գործողութիւններին մերձակայ բնակավայրերում: Հայրենի գիւղում հարազատները ստանում էին «սեւ թուղթ», սակայն սգալու համար չգիտէին թէ ուր գնալ: Բանն այն է, որ Հայրենական մեծ պատերազմին նուիրուած սկզբ-բնական շրջանի յուշարձաններում զոհուածների անունները չէին գրւում: Այդպիսին էր նաեւ Աղաւնաձոր գիւղում 1951 թ. կառուցուած աղբիւր-յուշարձանը, որի վրայ ընդամենը արձանագրուած էր. «Հայրենական պատերազմի զոհուած մարտիկների յիշատակին»: Մինչդեռ փորագրուած անունն է, որ մարդկային կորուստներ ունեցած ընտանիքների, հարազատների համար, յատկապէս երբ զոհուածը թաղուած է հեռու վայրում կամ անյայտ կորած է, յուշարձանը դարձնում է գերեզմանին հաւասարազօր մի վայր, որտեղ նա գնում է ոչ միայն զոհուածների խմբին յարգանքի տուրք մատուցելու, այլ նաեւ իբրեւ իր հարազատի շիրմին այցելութեան:[12] «Բացը» լրացնելու ձեւը Աղաւնաձորում եւ մի շարք այլ գիւղերում գտնուեց ոչ թէ զանգուածային կենոտաֆներ ստեղծելու ճանապարհով, այլ տոհմական գերեզմանոցում կամ գիւղի ազգակցական թաղում յուշարձան կանգնեցնելու միջոցով, որի վրայ արձանագրւում էին տոհմի/«ազգի» բոլոր զոհերի անունները: Աղաւնաձորի թաղերից մեկում 1966 թ. (թերեւս պատերազմի աւարտի 20-ամեակին) դրուեց վերնամասում կարմիր աստղով յուշարձան-աղբիւր, որի վրայ արձանագրուած է. «Հայրենական պատերազմում 1941 1945 զոհուած Աւանես, Օրբել, Սարգիս, Աշոտ, Նիկոլա, Աղասի, Բալաբեկ, Աղուան, Պապել, Գրիշա Պետրոսեանների անմահ յիշատակին» եւ պատկերուած է սգացող կնոջ ուրուապատկերը: Մեկ այլ տոհմական հենքով յուշասեան վրայ արձանագրուած է. «Գիւլիջանեան տոհմի զոհուածների յիշատակին 1920-21 թ. Մանուկեաններ Երանոս, Նիկոլա, (յեղափոխականներ) 1941 1945 թ. Հայրենական մեծ պատերազմում Մելիքսեթ Սմբատ Գրիգոր Յակոբջանեաններ / Դաթիկ Համբարձում Խաչիկ Յարութիւնեաններ / Խաչատուր Արտաւազդ Վիտուշ Գրիգոր Մանուկեաններ»: Բնութագրական է, որ զոհուածների մէջ տոհմի ազգանունը կրող մարդիկ բացակայում են: 1964 թ. մայիսի 9-ին գիւղի «Բէգոյի ջրաղացի» մօտակայքում բացուեց Հայրենական մեծ պատերազմում զոհուած ու անյայտ կորած Գրիգորեանների յիշատակի համար կառուցուած յուշարձանը:

ծրագրի շրջանակներում ԱՄՆ Սմիթսոնեան հաստատութեան մեթոդական եւ նիւթական օժանդակութեամբ ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի ութ, ապա չորս ազգագրագէտներից բաղկացած խմբի կազմում 2015 թ. յունիս եւ օգոստոս ամիսներին Վայոց ձորի աւելի քան երկու տասնեակ բնակավայրերում, ինչի համար ամերիկեան կողմին յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը:

12 Հմմտ. **Յարութիւն Մարութեան**, *Հայ ինքնութեան պատկերագրութիւնը*, էջ 72-73, 329: **Robin Wagner-Pacifici, Barry Schwartz**, *The Vietnam Veterans Memorial*: Commemorating a Difficult Past,- The Americal Journal of Sociology 97:2 (September 1991), pp. 376-420.

Վերնամասում կարմիր աստղով սլացիկ մի յուշարձան էլ կայ Մալիշկա գիւղի գերեզմանոցում, իշխող բարձունքի վրայ, եւ ասես վերեւից հսկում է մեռեալների աշխարհի անդորրը. այստեղ արձանագրութիւնը գրուած է ներկով, անպաճոյճ տառերով, մետաղական սալերի վրայ. «Հայրենական պատերազմի զոհուածների յիշատակին / Այվազեաններ 1941-45 թթ. / Ասատուր Հ. / Սումբատ Ա.Յ. / Գեղամ Ա. / Սիսակ Ա. / Բագրատ Ա. / Խաչիկ Ա. / Գարեգին Հ. / Սիրեկան Լ. / Աղուան Հ. / Եղիշէ Հ. / Մնացական Ս. / Սեդրակ Ս. / Վահրամ Ստեփանի Մխիթարեան»: Գերեզմանոցի կենտրոնական մասում կառուցուած է Արցախեան պատերազմում զոհուածներին նուիրուած փոքր յուշահամալիր, բաղկացած երկմասանի ցայտաղբիւրից (վրան սուր բռնած արծուի պատկերով), միմեանց դիմաց դրուած երկու զոյգ քարէ աթոռներից, եւ աւարտւում է ուղղաձիգ (վերնամասում կրակէ լեզուակներ յիշեցնող քանդակով) քարէ լայն սալով՝ հետեւեալ արձանագրութեամբ. «Յաւերժ փառք արցախեան ազատամարտում զոհուածների յիշատակին: Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կեանքը տայ իր բարեկամների համար: (Աւետարան ըստ Յովհաննէսի 15.13): Այսինքն, Մալիշկա գիւղի պարագայում երկու հայրենական պատերազմներին նուիրուած յուշարձաններն էլ կենոտաֆներ են եւ գտնւում են գերեզմանոցում, եւ այդ պատերազմների հին ու նոր զոհերը գիւղի բոլոր անցաւորների հետ սերտ միասնութեան մէջ են, կարելի է ասել՝ մեկ ամբողջութիւն են կազմում:

Մեկ այլ նման տոհմական/«ազգ»-ային կենոտաֆ-յուշարձան է տեղակայուած Արփի գիւղի գերեզմանոցում: Այն նորագոյն ժամանակների է (կառուցուել է 1986 թ.)՝ կարմիր տուֆի եւ մոխրագոյն բազալտի համակցութեամբ եւ ունի հետեւեալ արձանագրութիւնը. «1941 - 1945 Հայրենական մեծ պատերազմում զոհուած Մելիք-Սարգսեաններին / Աւագ Տիգրանի 1901 / Պերճ Բուրթելի 1904 / Աղասի Արամի 1913 / Խաչիկ Սարգսի 1920 / Շահէն Գագիկի 1921 / Արարատ Համազասպի 1923 / Մակիդոն Արշալոյսի 1924 / Կառլեն Արտաւազդի 1925 / Անմեղ զոհեր [ստալինեան բռնաճնշումների] Արամ Մկրտիչի 1882 / Ասատուր Բուրթելի 1886 / Հերոսները չեն մահանում նրանք ապրում են ժողովրդի հետ յաւերժ»: Մելիք-Սարգսեանների ժառանգները շուրջ մեկուկէս տասնամեակ ամեն տարի հաւաքւում էին այս յուշաքարի մօտ, ապա սեղանի շուրջ նշում էին այդ իրադարձութիւնը:

Այսպիսով, հայկական յուշարձանային համալիրներում (համազգային եւ տեղական մակարդակներում) գերեզմանոցային մշակոյթի դրսեւորումները նշանակալի տեղ ունեն:

Դա դրսեւորւում է.

- *յուշահամալիրների մասին տեղ գտած ընկալումներում եւ*
- *դրանով փոխպայմանաւորուած՝ դրանց կառուցուածքում եւ*
- *ժամանակի ընթացքում դրանցում տեղ գտած ձեւափոխումներում,*
- *յուշահամալիրներ կատարուող այցելութիւնների զանազան դրուագներում,*
- *գերեզմանոցային եւ յուշարձանային «յիշատակի ծէսերի» նկատելի ընդհանրութիւնների մէջ:*

Շատ բան համամարդկային է, որոշ տարրեր էլ աւելի շատ կրում են ազգային մտածողութեան դրոշմներ: Թեման բազմաշերտ է, ունի խորքային բազմաթիւ ելեւէջներ եւ կարիք է զգում շարունակական ուսումնասիրութեան:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Լուս. 1. 1990-1992 թթ. զինուած բախումների զոհերի գերեզմանները Հայոց ցեղասպանութեան զոհերի յուշահամալիրի յուշապատի դիմացի տարածքում: 25 ապրիլի 2019 թ.: Լուսանկարը՝ Յարութիւն Մարութեանի:

Լուս. 2. Հայ-ադրբեջանական պատերազմի զոհերին նուիրուած յուշահամալիրը ութ գերեզմաններով եւ զոհուածների լուսանկարներով: Հետեւի պլանում Սարդարապատի յուշահամալիրի մուտքն է: 19 ապրիլի 2017 թ.: Լուսանկարը՝ Արգամ Երանոսեանի:

Լուս. 3. Արցախեան պատերազմի զոհերի գերեզմանոցը շուրջ հարիւր շիրիմներով: Ստեփանակերտի յուշահամալիր, 15 մարտի 2018 թ.: Լուսանկարը՝ Յարութիւն Մարութեանի:

Լուս. 4. Հայրենական մեծ պատերազմի զոհերին (Պետրոսեաններ) նուիրուած յուշարձան, կառուցուած 1966 թ.: Գիւղ Աղաւնաձոր (Վայոց ձորի մարզ), 4 յունիսի 2016 թ.: Լուսանկարը՝ Յարութիւն Մարութեանի:

Լուս. 5. Հայրենական մեծ պատերազմի զոհերին (Այվազեաններ, Մխիթարեան) նուիրուած յուշարձան: Գիւղ Մալիշկայի (Վայոց ձորի մարզ) գերեզմանոց, 12 յունիսի 2016 թ.: Լուսանկարը՝ Յարութիւն Մարութեանի: